ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ և ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

Հետազոտական աշխատանք

Օտար լեզվով ընթերցած տեքստի ըմբռնումը ստուգելու միջոցները

Հետազոտական աշխատանքի ղեկավար՝Սրբուհի Լուլուկյան

Գերմաներենի ուսուցիչ՝Էլինե Հովհաննիսյան

Պատրաստ է պաշտպանության

Երևան 07.10.2022

Բովանդակություն

Ներածություն …… …… 3

Թեմայի ընտրության նպատակը և արդի խնդիրները……. ……..5

Հաջողված դասը …… …….6

Ընթերցանության նպատակն ու կարևոր դերը գերմաներեն

լեզվի դասընթացին…… 7

Դասին նախապատրաստվելը…… 8

Ընթերցանության երեք տեսակները …….. …… 10

Ընթերցանության ստուգման ավանդական ձևերը…… 12

Դասի նպատակը տեքստի հետ աշխատելիս ……..14

Եզրակացություն …… 16

Դասի պլան կոնսպեկտ…….. 18

Օգտագործված գրականության ցանկ …… 20

Ներածություն

Այսօր որևէ օտար լեզու իմանալը դարձել է մարդու կյանքի մի անհրաժեշտ բաղադրիչ,առանց որի հնարավոր չէ պատկերացնել 21-րդ դարի ցանկացած բնագավառի որևէ բանիմաց մասնագետ:Տիրապետել օտար լեզվի,նշանակում է տիրապետել լեզվի չորս հմտություններին՝բանավոր (խոսել և ունկնդրել)և գրավոր (գրել և կարդալ),որոնք անքակտելի և փոխներգործուն են:

Օտար լեզուն՝ որպես ուսումնական առարկա ,նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, հաղորդակցական կարողությունների ձևավորմանը,զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները,խոսքն ու մտածողությունը,ընդլայնում նրանց աշխարհայացքը,աջակցում սովորողի ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը:

Ըստ հանրակրթական դպրոցի օտար լեզուների չափորոշչի և ծրագրի ավագ դպրոցի՝ լեզվի իմացության բարձր մակարդակով ավարտողը պետք է ունենա ընթերցելու հետևյալ կարողությունները՝

.Ընթերցել հիմնական բովանդակությունը ըմբռնելու նպատակով.

.Որոշակի տեղեկատվություն ստանալու նպատակով

.Լիակատար հասկանալու և բովանդակության մանրամասներն ըմբռնելու նպատակով

Իմ հետազոտության թեման ընթերցանության կարողությունն է,թե ինչ գործիքներով կարելի է չափել ընթերցված տեքստի ըմբռնման ծավալը:Ընթերցանությունը սերտ կապված է մյուս բոլոր կարողությունների հետ,որովհետև տեքստի ընթերցումից հետո սովորողները կիրառում են իրենց խոսելու կարողությունը կարդացածը ներկայացնելու համար.Ուսուցիչը կարող է շատ սահուն անցնել գրավոր խոսքի կարողության զարգացմանը՝հանձնարարելով ներկայացնել էսսե կամ իրենց դիրքորոշումը թեմայի վերաբերյալ: Եթե ուսուցիչը նպատակ ունի նպաստելու նաև

լսելու կարողությունը,կարող է ընտրել տեքստ,որն ունի նաև ունկնդրելու հնարավորություն:

“ Ինֆորմացիայի ընկալումը ոչ թե պասիվ այլ ակտիվ գործընթաց է,որի ժամանակ սովորողները կիրառում են սեփական գիտելիքները,ընթերցանության և հասկանալու սեփական մարտավարությունները;”

(Hans Jürgen Krumm,1990,S.20)

Թեմայի ընտրության նպատակը և արդի խնդիրները

Թեման հետաքրքիր և կարևոր է ինձ համար,որովհետև հենց ճիշտ ընտրված ընթերցանության ,տեքստի հետ հետաքրքիր աշխատանքային ձևերի միջոցով կարելի է խթանել աշակերտների հետաքրքրությունը լեզվի նկատմամբ՝ուսուցման ընթացքում աշակերտի ուշադրությունը բևեռելով նոր բառապաշարի վրա,քանի որ բառապաշարի ուսուցումը լեզվակրթության առանցքն է,առանց որի անհնար է տվյալ լեզվով հաղորդակցվելը:Յուրաքանչյուր հմտության զարգացումը նպաստում է հաղորդակցության կատարելագործմանը:Ընթերցանության արդի խնդիրները աշակերտի մոտ հիշողական,տեսողական,արագ կամ դանդաղ մտածելու կառողությունների զարգացումն է,հերաքրքրություն առաջացնելը հաղորդակցության հիմնական ոլորտների՝երկրագիտական,մշակութաբանական տեղեկատվությամբ, խրախուսել վերլուծական մտածողություն,ստեղծել կարծիքների փոխանակման առողջ դաշտ,որի ժամանակ ուսուցիչն ավելի լավ է ճանաչում իր աշակերտին:

Գլուխ 1. Հաջողված դաս

Հելբերտ Մեյերը իր “Որն է հաջողված դասը” հրապարակման մեջ խոսում է հետևյալ հատկանիշների մասին,որոնք կարող են երաշխավորել արդյունավետ դաս:

Մեջբերում եմ մի քանիսը.

.Ուսուցիչը ներկայացնում է իր պլանավորած դասի ընթացքը

.Դասի ընթացքում միշտ տեսանելի է կարմիր թելը

.Ուսուցչի խոսքը հասանալի է և ճշգրիտ

.Դասի ընթացքի տեմպը համապատասխանում է սովորողների կարողությանը

.Առաջադրանքները ձևակերպված են հասկանալի

.Ուսուցիչը անդրադառնում է աշակերտների սխալներին կառուցողական ձևով

.Բավականաչափ ժամանակ է տրամադրված վարժման փուլին,

. դասարանի պատշաճ կահավորումը,որակով մեդիաների և նյութերի կիրառումը,լույսը,ակուստիկան,օդափոխությունը և այլն:

1.2 Ընթերցանության նպատակն ու կարևոր դերը գերմաներեն լեզվի դասընթացին

Ինչու են մարդիկ ընթերցում: Որպեսզի՝

1. տեղեկատվություն ստանան

2.գիտելիք ձեռք բերեն

3.ընդլայնեն բառապաշարը

Կարող ենք անվերջ թվարկել՝կախված ընթերցողի նպատակներից:

Ընթերցանությունը պետք է դիտվի որպես ճանաչողական գործընթաց,աշխարհի հետ հաղորդակցվելու որոշակի միջոց: Օտար լեզվով ցանկացած տեսակի ընթերցանության հիմնական նպատակը տեքստի բովանդակության ընկալումն է:Կարևոր է տեքստի բովանդակության ընտրությունը: Դառնալով հաղորդակցման մի միջոց՝ օգնում է իրականացնել ուսումնակրթական տարբեր ռազմավարություն-ներ՝ ընթերցանության հմտությունների ձևավորումից մինչև վերլուծական և քննա-դատական կարողությունների զարգացում: Տեքստի բովանդակությունը որոշում է, թե ինչպես աշակերտները կվերաբերվեն օտար լեզվով ընթերցանությանը որպես տեղեկատվություն ստանալու միջոց: Բոլոր տեքստերը պետք է լինեն հետաքրքիր, բովանդակալից, այդ պատճառով տեքստի ընտրություն կատարելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի հետևյալ չափանիշները.տեքստի տեղեկատվության աստիճանը, տեքստի ուսումնական նպատակները և խնդիրները, տեքստի և սովորողի հարաբե-րակցությունը, լեզվական դժվարությունները և կապակցված խոսքի ընկալումը: Ընթերցանության ամենակարևոր նպատակները հաղորդակցական հմտությունների ձևավորումն ու համապատասխան կարողությունների զարգացումն է: Տեքստի ըմբռնման ժամանակ խոսքը գնում է ուղղակի տեքստի իմաստը հասկանալու մասին: Երբեմն բովանդակության ըմբռնումը շատերի համար դժվարություն է առաջացնում, ինչը, սակայն, կարելի է հաղթահարել՝ հստակեցնելով յուրաքանչյուրի խնդիրները և ընտրել իր ընդունակություններին համապատասխան տարատեսակ տեքստեր: Ընթերցանության մեթոդները կարող են շատ անհատական լինել: Բացի տեքստում

եղած նյութից՝ ընթերցողը պետք է դրա վերաբերյալ ունենա սեփական մոտեցում,հիմնավոր գիտելիքներ,որպեսզի կարողանա կարդացածը ավելի արագ ընկալի ու մեկնաբանի :

1.3 Դասին նախապատրաստվելը

Դասի հաջողությունը կախված է ուսուցչի ուսուցողական գործիքների ճիշտ ընտրությունից, ինչպես արհեստավորը կընտրի իր գոծիքները որակով աշխատանք կատարելու համար

.տվյալ դասարանի լեզվամակարդակին բնորոշ բարդության տեքստ

.թեմայի ճիշտ ընտրություն՝ելնելով աշակերտների տարիքին բնորոշ առանձնահատկություններից և հետաքրքրություններց,որոնք կմոտիվացնեն նրանց էլ ավելի սիրով և ուշադրությամբ կարդալ:

.սովորողները պետք է ունենան նախնական որոշակի գիտելիքներ թեմայի շուրջ:

.Հնարավորինս ծանոթ բառապաշար և մատչելի քերականություն,որոնք չեն խանգարի տեքստի բովանդակության ընդհանուր ընկալմանը:

.տեքստի հետ աշխատելու ճիշտ ռազմավարություն,առաջադրանքների տեսակների ճիշտ ընտրություն:

.կազմի համապատասխան բարդությամբ առաջադրանքներ՝կախված դասարանի ընդհանուր լեզվամակարդակից և թեմայից:

Առաջադրրանքները կարող են ամենապարզից,օրինակ՝ դուրս գրիր տեքստից բոլոր տոները, մինչև ամենաբարդը լինել, օրինակ տեքստի՝ բովանդակությանը առնչվող հարց, որը նպատակ ունի բացահայտել գործողությունների տրամաբա-նական ընթացքը կամ պատճառահետևանքային կապերը և այլն:

Տեքստի իմաստի ըմբռնումը ստուգելիս առաջադրանքների ժամանակ տարբերակում են լեզվավերարտադրողական**(ohne)sprachlich reproduktive) և (sprachlich produktive) Aktivitäten:**

Sprachlich reproduktive դեպքում խոսքը գնում է կարդացածը կամ լսածը վերարտադրելու մասին: Օրինակ՝Պատասխանիր հարցերին՝օգտվելով տեքստի ինֆորմացիայից կամ լրացրու բլանկը տեքստում եղած ինֆորմացիայով.

Sprachlich productive ժամանակ հակառակը՝սովորողներից պահանջվում է լեզվական և բովանդակային ձևակերպումներ,**Օրինակ՝** գրիր գնումների մի ցանկ կամ տրված բառապաշարի օգնությամբ պատմիր քո ընտանիքի մասին կամ կազմիր նախադասություններ և այլն:

(Ohne)sprachlich reproductive առաջարկում է օրինակ առաջադրանքներ,որոնց լուծումը լինում է ճիշտ պատասխանները նշելով,նկարները տեքստերին համապատասխանեցնելով և այլն:

Տեքստային աշխատանքի ժամանակ առաջադրանքները առանձնանում են երեք փուլով.

Առաջադրանքներ տեքստի ընթերցումից առաջ

Տեքստի բովանդակության,ժանրի,իրադարձությունների ընթացքի վերաբերյալ **կանխատեսումներ անել**՝հիմնվելով նկարների,սխեմաների,բանալի-բառերի,տեքստի գծապատկերի և այլնի հիման վրա:Վերնագիրը նույնպես կարող է կանխատեսումների և ենթադրությունների առիթ տալ,ինչը միաժամանակ կարող է նաև ընթերցողին թյուրիմացության մեջ գցել:

Առաջադրանքներ ընթերցանության ընթացքի համար

նայել **տեքստի վերջում տրված հարցերին,** որոնք իրենց հերթին նորից հուշում են տեքստի գլխավոր բովանդակության մասին և դրանց շնորհիվ պարզ է դառնում, թե

ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել տեքստն ընթերցելիս: Եվ այս դեպքում խոսքը գնում է ոչ թե յուրաքանչյուր բառը այլ տեքստի ընդհանուր իմաստը հասկանալու մասին: Տեքստը պետք է կարդալ բարձրաձայն՝ ուշադրություն դարձնելով բառերի ճիշտ արտասանությանը, շեշտադրմանը, նախադասության հնչերանգին, մնացածները կարող են հետևել ընթերցողին:

.տեքստը բաժանել իմաստային մասերի

.Առաջադրանքներ ընթերցանությունից հետո,որոնք կստուգեն տեքստի ընկալման աստիճանը

Ընթերցանության ընկալման ստուգումը կատարվում է՝ սովորողների տեղեկատվությունը համեմատելով տեքստի բովանդակության հետ:

Բոլոր ընտրված առաջադրանքները պետք է նպաստեն տեքստի ընկալումը դյուրացնելուն, բանավոր խոսքի զարգացմանը և գլխավոր ինֆորմացիայի ամրապնդմանը:

1.2 Ընթերցանության երեք տեսակները

Գերմաներենում տարբերակում են տեքստի ուղղորդված ընթերցանության երեք տեսակ,իսկ ընթերցանության տեսակի ընտրությունը կախված է սովորողի լեզվամակարդակից և տեքստի բարդությունից:

Ընդհանուր ընթերցանություն,(Globales oder Überfliegendes Lesen),

.Այն բանից հետո,երբ աշակերտները կարդում են տեքստը,ստուգվում է ընդհանուր իմաստի ընկալման աստիճանը,այն է ամենակարևոր ինֆորմացիան,կարմիր թելը, որը այս փուլի համար բավական է:

Ընտրողաբար ընթերցանություն(Selektives oder suchendes Lesen,Semantierungsphase)

Այստեղ ըստ ուսուցչի հայեցողության ուշադրություն է դարձվում տեքստի կոնկրետ պարբերություններին կամ ինֆորմացիային:

Մանրամասն ընթերցանություն(Detailiertes oder genaues Lesen)

Բոլոր նյուանսներն ու մանրամասնությունները կարևոր են,այս դեպքում տեքստը պետք է հասկանալ բառ առ բառ,պահանջում է բարձր կենտրոնացում, շատ ժամանակ և իհարկե որպես օգնություն անհրաժեշտ է բառարան: Բառարանային աշխատանքի ժամանակ բացի անծանոթ բառերի դուրս գրումից,արդյունավետ է կազմել հոմանիշներ և հականիշներ,դարձվածքների թեմատիկ բառախմբեր,սովորած բառերն ու բառակապակցությունները օգտագործել գրավոր խոսքում:

Իսկ մինչ բառարանի օգնությանը դիմելը,օտար լեզվով ընթերցելիս սովորողներն անխուսափելիորեն հանդիպում են անծանոթ բառերի,այդ իսկ պատճառով պետք է սովորեցնել նրանց բացահայտել անծանոթ բառի իմաստը հետևյալ կերպ.

.Կարդալ և հասկանալ անծանոթ բարդ բառը՝ծանոթ բառակազմական բաղադրիչների հիման վրա

.Կռահել անծանոթ բառի նշանակությունը՝նախադասության ընդհանուր իմաստի ,համատեքստի, կամ այլ լեզուների նույնանիշ բառերի հետ նմանության հիման վրա /միջազգային բառեր/

.Կարդալ և հասկանալ տեքստի բառերի, առանձին նախադասությունների, հատված-ների, պարբերությունների միջև եղած իմաստային կապը: Եթե ճանաչում են բառը, կարող են սեփական բառերով մյուսների համար բացատրել: Երբեմն վերջում պարզ է դառնում, որ տվյալ անծանոթ բառերի չիմացությունը բոլորովին էլ չի ազդում տեքստի հիմնական բովանդակության, գլխավոր ասելիքի ընկալման վրա և այս դեպքում կարելի է շրջանցել անծանոթ բառերը :

Ցանկացած դաս պետք է կառուցվի՝ հետևյալ սխեման աչքի առաջ ունենալով:[3]

Einstieg	**Erarbeitung**	**Ergebnissicherung**
(Einführung)	**(Präsentation,Semantisierung)**	**(Üben)**
Motivation für das Thema	Einarbeitung in den Lernstoff	Üben
Hinführung zum Thema	Kompetenzerweiterung	Beurteilen
Aktivierung von Vorwissen		

Գլուխ 2. 1.1 Ընթերցանության ստուգման ավանդական ձևերը

Ստուգման ավանդական ձևերն են `ընթերցածի բովանդակության վերաբերյալ **հարցերի կազմում**, **տեքստի վերարտադրում և թարգմանություն**, ինչպես նաև այժմ լայն տարածում գտած ամենատարբեր **թեստեր:**

.Ընթերցած նյութը բաժանել առանձին- առանձին իմաստակիր հատվածների,դրանք վերլուծել,համադրել,եզրահանգումներ անել:

.**հարցեր**,որոնք կստիպեն սովորողին վերարտադրել տեքստը սեփական բառերով:

Fragen beantworten!

Worum geht es im Text?

.**հարցեր**,որոնք պահանջում են նշել ***ճիշտ է***,կամ ***սխալ է***

Richtig oder falsch[5]

1.Anna möchte sich gern öfter mit Jonas treffen. R F

2.Anna glaubt,Jonas findet sie nicht nett. R F

3.Anna mag Jonas Freunde. R F

Հարցադրումներ անել և պատասխանել տրված հարցերին(Frage-Antwort-Tandem) ձևով

Դասավորել(Zuordnen)

-Դասավորել խառը տրված նախադասությունները՝համարակալելով դրանք ճիշտ հերթականությամբ(Textsalat)

Համեմատել և ճիշտ համակցել , համադրել տեքստի տարբեր մասերն ու նկարները՝

.համապատասխանեցնել ով ինչ նախադասություն է ասում (Wer sagt das?) [5]

Anna, Jonas oder die Kellnerin?

_Was hättest du gern?

-Ich hätte gern ein Schokoladeneis.

-Könnten wir bestellen?

-Ja gerne.

.Մասնատված տեքստի խառը կտորները ըստ տրամաբանական հերթականության վերադասավորել՝հարցերի կամ նկարների օգնությամբ

.Աշխատանք բառարանով,գտնել բառարանում,կարդալ և հասկանալ բառերի իմաստը.Որպեսզի բառը ավելի լավ տպավորվի հիշողության մեջ,խորհուրդ է տրվում նաև կազմել նախադասություն և անգիր սովորել:

.Հնարավորինս կրճատել տեքստը՝ չխախտելով հիմնական բովանդակությունը.

Ընտրել նախադասության շարունակությունը(Multiple Choice)

.Ընտրել նախադասության սկիզբը

.Համապատասխանեցնել տրված բառերն ու բառակապակցությունները և դրանց թարգմանությունները

Wie ein Pferd arbeiten	համառ՝ ինչպես ավանակը
Einen Bärenhunger haben	սոված՝ ինչպես գայլը
Stur wie ein Esel	աշխատասեր՝ ինչպես մեղուն

Կազմել բաց թողնված բառերով տեքստ,որն իր մեջ կներառի տեքստի ակտիվ բառապաշարը(**Lückentext**) [1]

Ուսուցիչն ունի ստուգման գործիքների մեծ ընտրանի,իսկ աշխատանքային ձևի ընտրությունը շատ անհատական է:

Եթե ուսուցիչը նպատակ ունի զարգացնելու նաև սովորողի գրելու կարողությունը ինչպես նաև վերլուծական մտածողությունը,կարող է հանձնարարել աշակերտին գրավոր արտահայտել իր դիրքորոշումը տեքստի վերաբերյալ՝հնարավորինս կիրառելով ակտիվ բառապաշարը և հիմնավորել կարծիքը :

Գլուխ 3. Դասի նպատակը տեքստի հետ աշխատելիս

Օրինակ 1.Կարողանում է հասկանալ գլխավոր ինֆորմացիան և կենտեքստում բացել կարևոր բառերի իմաստները:

2.Տեքստից կարողանում է հավաքել **Pro և Contra** փաստարկներ:

3.Ծանոթանալով օրինակ ճամփորդության միջոցներին և տուրիստական քաղաք-ների՝ կարողանում է գրել նամակ իր կատարած ճամփորդության մասին:

4.Կարողանում է զույգերով աշխատանքի ժամանակ կարդացածի բովանդակությունը իր սեփական բառերով այնպես ներկայացնել,որ ընկերը կարողանա իր մոտ նշել ամենակարևոր ինֆորմացիան:

5.Սովորողները կարողանում են երկխոսությունների միջոցով հարցնել տեղանքի, ճանապարհի մասին, ռեստորանում ուտելիք պատվիրել, խանութում գնումներ կատարել և այլն:

Ամփոփման փուլում(**Evaulation**)պետք են այնպիսի առաջադրանքներ,որոնք վեր կհանեն սովորողի դեռ ունեցած դժվարություններըդրանք հետագայում ինտենսիվ վարժելու համար,ինչպես նաև որից պարզ կդառնա ,թե արդյոք ուսուցիչը հասել է դասի պլանում նշած իր նպատակին: Այս փուլին կարող են պատկանել տնային առաջադրանքները, օրինակ տեքստի վերաբերյալ կարծիքի շարադրում, նամակ, նկարահանում և այլն:

Փեթեր Բիմմելը,Բերնդ Քաստը և Գերդ Նոյները իրենց “**Deutschunterricht planen**” [2]գրքում առաջարկում են նաև նմանատիպ հարցաթերթիկի օգնությամբ կատարել **ամփոփման** փուլը՝ստուգելով սովորողների ձեռք բերած գիտելիքների աստիճանը տվյալ դասի շրջանակներում:

Traust du dir das schon zu?Auf Deutsch…..			
	Ja, ganz sicher.	Ich weiß nicht.	Nein,ich glaube nicht.
……einem Deutschen den Weg zum Bahnhof zu beschreiben?			
… ein Telefongespräch mit einem deutschen Brieffreund zu führen?			
…. Im Internet einen Chat mit einem anderen Sprachschüler zu machen? Usw			

Եզրակացություն



[2]Նկարում տեսնում ենք ուսուցչին՝ խոհարարի կերպարով,որն ուզում է համեղ ճաշ ստանալ,մեր դեպքում ,համեղ դաս՝ավելացնելով տարբեր բաղադրիչներ,մեր դեպքում նկարում տեսանելի տարբեր միջոցներ.

Ինչպես տեսանք,տեքստի ընկալումը ստուգելու գործիքների մեծ ընտրանի կա,որոնց արդյունավետ և ճշգրիտ ընտրությունից է կախված ուսուցչի պլանավորած դասի հաջողությունը: Ամեն ինչ սկսվում է տեքստի ընտրության ճիշտ տեսակից՝հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունը,աշակերտների լեզվամակարդակի աստիճանը և ուսուցչի՝տվյալ դասի համար դրած նպատակը: Դասապրոցեսը մի

ընթացք է,որի ժամանակ կարող են լինել տարբեր իմպրովիզացիաներ՝կախված դասարանի ընդհանուր մակարդակից և ուսուցչի ստեղծագործական մտքից:

Unterrichtsplan

Thema: Sofie möchte zum Casting

Zielgruppe: Kinder auf dem Niveau A2.2

Material: Beste Freunde,CD,Bild

Lernziel:Über das Thema diskutieren,Vorschläge machen,Vermutungen anstellen

N	Unterrichts phasen	Lernaktivität	Sozialform	Lehreraktivität	Übungsmaterial	Zeit
1	Einstieg Motivation zum Thema	Die Sus sprechen über eigene Erfahrungen	Im Plenum	Was beduetet Casting?Hat jemand an einem Casting teilgenommen?	Thema(Beste Freunde,St 26)	5 Min.
2	Erarbeitung	1.Die S.schauen das Bild an und stellen Vermutungen an 2.Die Sus lesen Aufgabe 4a St.27.Sie ordnen die Anzeigen zu den Personen an. 3.Die Sus schauen das Bild an.Was ist los?	Im Plenum Im Plenum Im Plenum	1.Schau das Bild an.Was glaubst du?Wohin geht Sofie? 2.Lies die Wünsche der Jugendlichen und die Anzeigen 3.Schau das Bild an und hör zu.Was ist los? Was ist richtig?	Bild St.26 2.Übung 4a St.27 3.Übung 5a,b St.28	5 Min 10 Min 10 Min
3	Ergebnissicherung Üben Beurteilen	1.Die Sus lesen noch einmal die Anzeige und ergänzen Sofies Notizen 2.Die Sus machen Vorschläge anhand der Übung 6 St.28	Im Plenum Gruppenarbeit	1.Schreibtraining. Ergänze Sofies Notizen Wann?Wo?Was mitschicken? 2.Schreibt in Gruppen eine Kettengeschichte	1.Übung 4b St.27 Übung 7 St.28	5Min. 5Min

		3.Die Sus spielen ein Telefongespräch,wobei sie über das Thema diskutieren und mit Wenn-Sätze Vorschläge machen	Partnerarbeit	3.Spielt das Telefongespräch	Übung 8a St.28	5 Min.

Օգտագործված գրականության ցանկը

1.Գերմաներեն լեզու Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր էջ 77,էջ 44-49

2.Deutschunterricht planen Peter Bimmel,Bernd Kast,Gerd Neuner (Evaulation und Fehlertherapie,Beispiel 1,St.166), Unterrichtsphasen (St.71) Merkmale für guten Unterricht(St.121)

3.Beste Freunde A2.2 ,(Übung 4 St.13,Übung 10b St.15,)

4.DLL 7 Prüfen,Testen,Evaluieren,Rüdiger Grotjahn,Karin Kleppin, Leseverstehen überprüfen (St.88)

5.DLL 5 Lernmaterialien und Medien,Dietmar Rösler,Nicola Würffel, Klett-Langenscheidt ,München 2019,

6.DLL 4 Aufgaben,Übungen,Interaktion Hermann Funk,Christian Kuhn,Dirk Skiba,Dorothea Spaniel-Weise,Rainer E.Wicke,Klett-Langenscheidt ,München 2018, (Übungstypen St.26)